ՄԱՍ 2. Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

2.1 Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը.

Դպրոցի տարածքը ցանկապատված է, սակայն ետնամասի պանելային ցանկապատը մասամբ գտնվում է վթարային վիճակում: Այդ մասին տեղյակ են, ինչպես քաղաքապետարանի համապատասխան մարմիններին, այնպես էլ Արտակարգ իրավիճակների հատուկ ծառայությունը, տարածքը, անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Դպրոցի տարածքը մեկուսացված և հեռացված է ավտոճանապարհային գոտուց, աղմուկից, օդի աղտոտման օբյեկտներից: Անվտանգությունը ապահովվում է նաև տեսախցիկների միջոցով: Արտակարգ իրավիճակների հատուկ ծառայության մեքենաներն անարգել կարող են մոտենալ շենքին: Դպրոցի տարածքը մաքուր է, աղբահեռացումը՝ կանոնավոր, բայց լաբորատորիաներում օգտագործվող վտանգավոր նյութերի թափոնները չեն հավաքվում հատուկ աղբարկղերում և դուրս բերվում դպրոցի տարածքից: Դպրոցի ողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների, ինչպես նաև՝ թափառող կենդանիների դեմ /տես պայմանագրի պատճենը/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցն ունի 1 հա մակերեսով կանաչ գոտի, ուստի պարբերաբար կատարվում է ծառատունկ, տարածքի մաքրություն, ինչպես նաև ծառերի բների մշակում և սպիտակեցում:

2021-2022 ուստարում Մ. Նալբանդյանի անվան հ33 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Tapon.am հավելվածի իրավատեր «Գրանտ Մաստեր» ՍՊԸ-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի համաձայն դպրոցում հավաքված թղթի թափոնը տրամադրվում է «Գրանտ Մաստեր» ՍՊԸ-ին՝ փոխարենը վերջինս դպրոցին տրամադրում է տնկիներ, իսկ կազմակերպվելիք ծառատունկը իրականացվում է միասին:

Թղթի թափոնները հավաքվում են «Գրանտ Մաստեր» ՍՊԸ-ի կողմից տրամադրված համապատասխան տարաներում:

Ինչպես նաև իրականացվում է ծառատունկ և տարաբնույթ միջոցառումներ:

2.2 Ուսումնական հաստատությունում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ

Դպրոցի շենքը կառուցվել է 1982 թ. և մինչ այժմ վերանորոգում չի իրականացվել, ուստի ունի ***կապիտալ վերանորոգման կարիք***: Շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին: Բարերարների և ծնողական համայնքի աջակցությամբ դպրոցում վերանորոգվել է 5 դասասենյակ: Դասասենյակներից մեկը անվանակոչվել է «Փառքի սենյակ» ի պատիվ 44 օրյա պատերազմում զոհված մեր դպրոցի շրջանավարտների: Փոխվել է 5 դասասենյակի հոսանքագծերը, լամպերը և դռները, ինչպես նաև նախասրահի պատուհանները (15մ^2): Կատարվել է ջեռուցման ներքին համակարգի մասնակի վերանորոգում , որը կազմել է 973935դրամ: